ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ապրիլի 2025 թվականի № 132-Ա

ՍՈՒՍԱՆՆԱ ՍԱՀԱԿՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 220-րդ հոդվածի 1-ին մասի, 223-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 226-րդ հոդվածի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետի 2025 թվականի մարտի 27-ի № Ն/367-2025 զեկուցագիրը, *Սուսաննա Սահակյանի* 2025 թվականի ապրիլի 3-ի № 11 գրավոր բացատրությունը՝ **որոշում եմ.**

1. Աշխատանքային կարգապահությունը խախտելու՝ աշխատանքային պարտականությունները ոչ պատշաճ կատարելու համար Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Արագյուղի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար ***Սուսաննա Իսահակի Սահակյանի*** նկատմամբ կիրառել ***«խիստ նկատողություն»*** կարգապահական տույժը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ա. ՄԱՀԱԿՅԱՆ**

2025 թվականի ապրիլի 11
ք. Հրազդան